Դաս 3-4. Մեր հարևանները (Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա)

- *Մեծ Հայքի 15 նահանգներից մեկը կոչվել է Պարսկահայք, որն ընդգրկում է Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիսային և արևմտյան առափնյա շրջանները: Պարսկահայք նշանակում է պարսիկներին կամ պարսից աշխարհին մոտ կանգնած Հայք (Հայաստան), այսինքն՝ Հայաստանի այն մասը, որը մոտ է, սահմանակից է Պարսկաստանին:*
- *1603–1604 թթ. պարսից Շահ Աբասի կողմից Երևանի շրջանից տեղահանվածները և Պարսկաստան բռնագաղթած–ները Սպահանի հարավային ծայրամասում կառուցում են Նոր Ջուղա անունով բնակավայրը: Շահ Աբասի կարգադրությամբ հայերին տրվում են հատուկ արտոնություններ, Նոր Ջուղայի ղեկավարումը ամբողջապես հանձնվում է հայերին:*